

Արդեամբք ալ, ինչպէս Ղուկաս Գառնեցի կը վկայէ, «ճշմարիտ վարդապետը արդեան ժամանակիս եւ մեծամեծք եւ իշխանաշուք արք եւ փառաւորք, որք կային ընդհանուր ազգս Հայոց ի Կոստանդնուպօլսէ եւ ի Լովայ եւ ի մայրաքաղաքէն յԱմթոյ եւ ի Կեսարիոյ եւ Վասպուրական յերկրէն եւ այլք ամենեքեան, զրով եւ բանիւ եւ վկայական թղթով միաբանեալ էին ընդ սմայ (Մովսիսի) սակս խնդրոյս այսորիկ»:

Նոյն իմաստով կը գրէ նաեւ Դարանաղցի¹ (297—298). «Եւ երկրին մեծն ու փոքրն ամենեքեան արժան տեսին, որ անապատաւորքն այլ եւ ամենայն մերձակայ երկիրքն եւ գաւառքն այլ արժան տեսին զՏէր Մօսէս վարդապետն, զի լիցի կաթողիկոս եւ նսացի յաթոռ սրբոյն Գրիգորի, զի նորոգեսցէ զխախտեալքս եւ զկործանեալքս թերահաւատութեամբ եւ անգիտութեամբ մեղաց եւ ի լոյս ածել զխաւարեալքս անզղջութենէ մեղօք»:

Հայ ժողովրդեան ընդհանուր փափաքին

¹ Դարանաղցին այս տեղեկութիւնները քաղած է Սարգիս վարդապետէն, որ «երկու տարի անդ լինելով մօտ Հոգեւոր Տէր Մօսէսին, յորժամ որ ուղարկել առ իս ի հնազանդութիւն, նա՛ մեզ սիրով ողջունի զիր էր ուղարկել եւ զայն եւս յիշել թէ՛ Անտեղի է զմեր ամենայն որպիսութիւնն քեզ ասել, ահա քո աշակերտդ, որպէս ետես զամենայն զիարդն եւ զամենայն որպիսութիւնն մեր, թող Աստուծով պատմեսցէ քեզ: Եւ նա պատմեաց մի ըստ միովջ զամենայն արարս եւ զգործս նորա, զոր ես համառօտիւ զրեցի ի կարճոյ» (էջ 299—300):